

Полный армяно-русский словарь составленный докторомъ философіи А. ДАГБАЦЯНОМЪ

(Ա.—բաղմագին)

Լիակատար բառարան Հայերէնից-ռուսերէն. կազմեց Ա. ԴԱԳԲԱՅԱՆՑ

Պ. Դաղբաշեանը, որ արդէն, ինչպէս լսում ենք, աւարտել է իւր ռուս-հայ բառգրքի ապագորութիւնը, ձեռնարկել է հայ-ռուս բառարանի կազմութեան, որի առաջին պրակը ստացել ենք արդէն մենք: Լեկսիկօգրաֆիան, որի մէջ պ. Դաղբաշեանը իրեն յայտնագէտ է համարում, իրաւ որ մի ամբողջ գիտութիւն է և կապուած է գիտութեան բաղմաթիւ ճիւղերի հետ: Լիակատար բառարան կազմելու համար եթէ ոչ մասնագիտօրէն, երեսնէ պէտք է ընդհանուր ծանօթութիւն ունենալ այդ լեզուների նշանաւոր մատենագիրների հետ:

Մենք մասնագէտ-լեզուաբան չենք, բայց շատ լաւ գիտենք, որ լաւ բառարան կազմելու համար պէտք է բացատրիչ օրինակներն ու ոճերը նախ մատենագիրներից առնուած լինեն և ապա ժողովրդական բարբառներից, բայց ոչ բնաւ դեռհիկ խօսակցական լեզուից:

Բացի այս, լեկսիկօգրաֆը պէտք է այնքան հմուտ լինի լեզուների մէջ, որ կարողանայ որոշել բառերի նախ հիմնական նշանակութիւնը երկրորդական և կողմնակի նշանակութիւններից և երկրորդ՝ կարող լինի բացատրել բառերի ժամանակի ընթացքում փոփոխուած նշանակութիւնը: Կան և բաղմաթիւ այլ կարևոր պայմաններ, առանց որոնց ոչ միայն լիակատար բառարան չի կարելի կազմել, այլ և ամենափոքր առձեռն բառարան անգամ:

Առայժմ պ. Դաղբաշեանի հրատարակած բառարանի առաջին պրակը յանրամասն քննութեան ենթարկելու դիտաւորութիւն չունինք, այլ միայն ցանկանում ենք ցոյց տալ աչքի ընկած թերութիւնները:

Իրքի հէնց երկրորդ երեսում պ. Դաղբաշեանը աղաթ բառը թարգմանում է адать և յետոյ обычное право: Թէ ինչպէս պ. Դաղբաշեանը բաց է թողել առաջին խօսքը, որ պէտք է լինի обмчдѣ, անմիջապէս դժուար է՝ հասկանալ: Աթադ նախ հայերէն չէ, այլ թուրքերէն է և զաւառական խօսք, իսկ յետոյ աղաթ կը նշանակէ обмчдѣ և ապա обычное право:

Ախոռ թարգմանում է конюшня, хлѣвъ և երկրորդ նշանակութիւնը դնում է ясли և այլն, մինչդեռ ախոռ նախ կը

նշանակի стояло, ясли և ապա գով և այն էլ միայն գաւառաբարբառներում Ախոռ конюшня կը նշանակէ:

Աղօթարար թարգմանում է слуга и богомолецъ: Թէ որ մատենագրից է վերցրել պ. Դաղբաշեանը Աղօթարար բառի համար слуга խօսքը՝ յայտնի չէ:

Ամստուայ շոգ, շոգեր, պ. Դաղբաշեանը թարգմանում է жаръ, лѣтныя жары առանց հասկանալու, որ արևի տաքութեան համար ոռւար յարա է գործ դնում, և ոչ երբէք жаръ, որ գործադրում է ջերմութեան աստիճանը որոշելու համար ևս:

«Անցեալ ամառ նա այստեղ էր» պարբերութիւնը պ. լեկսիկօգրաֆը թարգմանում է въ прошедшемъ лѣтѣ, որ բոլորովին անգործածական ձև է և ոռւար նոյն միտքը յայտնելու համար ասում է въ прошедшее лѣто:

Մեզնից ամէն մէկը ունի իւր ցաւերը թարգմանել է у каждого изъ насъ свои горя, որ բնաւ չէ պատահում ոռւար հեղինակների մօտ, այլ միմիայն եզակի է գործադրում у каждого свое горе:

Ամօթ խօսքը թարգմանում է և совѣсть, որ բնաւ հայ լեզուի մէջ այս մտքով չէ պատահում, որովհետև совѣсть խիղճ կը նշանակէ:

Ինչ այլանդակ դէմք ունի պարբերութիւնը թարգմանել է что за безобразная рожа, որ միանգամայն ծիծաղելի է, որովհետև ոռւարի рожа խօսքը ինքն ըստ ինքեան образный լինել չի կարող և դէմք рожа չէ, այլ այլանդակ դէմք կը նշանակէ безобразный видъ, безобразное лицо:

Այսուհետև խօսքի առաջին նշանակութիւնը դրել է съ сегодняшнаго дня, որ բոլորովին անպէտք է, որովհետև դրա համար ունինք նախ՝ отнынѣ, իսկ съ сегодняшнаго дня-ի համար մենք ունինք այսօրուանից խօսքը:

Այցելութիւն կամ այց թարգմանել է միմիայն посещение և визитъ խօսքերով և կարծես բոլորովին տեղեկութիւն չունի, որ գրաբառում այցելութիւն կը նշանակէ և օգնութիւն, խնամք, հոգատարութիւն, որ շատ յաճախ պատահում է մեր հեղինակների մէջ, որպէս և Եղիշէն ասում է. «և զսոյն և զայս ամենայն այցելութիւնս Աստուծոյ, որ ի վերայ աշխարհին Հայոց մեծապէս երևեցաւ՝ գրեցին սուրբ եպիսկոպոսունք...»:

Առհասարակ պ. Դաղբաշեանը ոչ մի բացատրութիւն կամ դարձուածք չէ բերում, որից կարելի լինի չափել նրա ծանօթութիւնը մեր մատենագիրների հետ: Ընդհակառակը նրա բոլոր օրինակները կամ հասարակ խօսակցութիւններ են կամ գաւառաբարբառներից առած:

Անալի Թարգմանել է միմիայն безсольный, несольный և բոլորովին չը գիտէ, որ ջրի համար օրինակ անալի ուսե-
րէն ուղղակի կը նշանակի прѣсная:

Անբաւելի Թարգմանել է безпредѣльный, безконечный, որ բոլորովին սխալ է, որովհետեւ անբաւելի հայերէն կը նշա-
նակէ այնպիսի բան, որ ինքը չի կարող տեղաւորուել և ոչ
թէ անսահման: Զարմանալի է որ պ. Դաղբաշեանը չէ յիշում
Ծննդեան շարականը, «Անբաւելին երկնի և երկրի 'ի խանձա-
րուս պատեցաւ», որ կը նշանակի անպարունակելի, ուստի և
աւելի մօտիկ կերպով անբաւելի կարելի է Թարգմանել необъ-
ятный, необъемленный բառերով:

Բազմաթիւ են այն բառերը, որոնց առաջին նշանակու-
թիւնը բառերէք յօրինողը անպատճառ սխալ է դրել, իսկ երկ-
րորդ կամ երրորդ բառերը միայն 'ուղիղ:

Անծալ Թարգմանում է негнүвшися, негнүтый և ապա
անծալը—безъ складокъ, նախ անծալ հիմնական խօսք չէ և
հազիւ գործածական, երկրորդ ծալել չի նշանակի гнүть, сги-
бать, որովհետեւ այս հասկացողութեան համար հայերէն կեռել
խօսք կայ, ուստի և աւելի ճիշտ կը լինէր անծալ խօսքի դէմ
несложенный դնել:

Արախչին колпакъ է Թարգմանում, թէև աւելի ճիշտ է
чепчикъ, և յետոյ՝ колпакъ ունի և փոխաբերական նշանակու-
թիւն:

Արանը միմիայն промежутокъ է Թարգմանում, որ բոլոր
ներութիւնը չի արտայայտում, որովհետեւ промежутокъ խօսքը
ժամանակի մասին էլ կարելի է ասել, իսկ արանքը միմիայն ա-
ռարկաների և տեղի մասին է ասում, ուստի և պէտք էր մի
քանի բառեր ևս դնել, проходъ, рядъ:

Արեգնակերպ Թարգմանել է солнцевидный, բայց աւելի
ուղիղն է солнцеподобный:

Արծարծել գրում է նախ разсуждать, յետոյ возбуждать,
воспламенять, մինչդեռ արծարծել նոր լեզուի մէջ աւելի գոր-
ծածական է գաղափարի նկատմամբ և այն էլ կը նշանակի
կրկնել, տարածել, վարժեցնել, որպիսի հասկացողութիւնների
համար բառարանում բացատրութիւն չկայ:

Ազատել բառի երկրորդ նշանակութիւնը դրել է пови-
вать, принимать (младенца), որ միանգամայն սխալ է, որով-
հետեւ ոչ մի հեղինակ և ոչ իսկ ժողովուրդը ազատել խօսքը
այս մտքով չի հասկանում: Ծննդականի համար ժողովուրդը
ասում է, որ ազատուեց, այսինքն ծնեց, իսկ повивать հայե-

րէն կը նշանակի բարուրել և առաջին անգամ նորածին երեխային բարուրող տատմայրը ուսներէն повивальная бабка անուն է ստացել:

Աղանձ—жареная молодая пшеница և յետոյ жареный молодой ячмень, որ նոյնպէս սխալ է, որովհետեւ աղանձ հայ ժողովուրդը շինում է կաղանդին կամ բարիկենդաններին, երբ մեր երկրում այսուամենայնիւ молодое пшеница լինել չի կարող: Պարզ է, որ պ. Դաղբաշեանը աղանձ խօսքը շփոթել է մեր հնդի խօսքի հետ, որ իրօք կը նշանակի жареная молодая пшеница: Молодая խօսքը բոլորովին սխալ է դրուած:

Անխուլ Թարգմանել է глухой, удаленный отъ шума, мало посѣщаемый, անխուլ փողոց,—глухая улица, բայց բաց է թողել որ անխուլ կը նշանակէ և ծածուկ, անյայտ, ինչպէս երևում է «չէ զանխուլ ի ձէնջ» գրաբար ոճից, որ կը նշանակի ձեզ անյայտ չէ:

Արտասուարբեր բառի առաջին նշանակութիւնը նրբութիւնից զուրկ խօսքով է Թարգմանում выдѣляющий слезы, որ օրինակ եթէ մէկը կամենայ «արտասուարբեր տեսարան» ոճը ըստ պ. Դաղբաշեանի Թարգմանել, պիտի ասէր сцена, выдѣляющая слезы: Պարզ է, որ շատ այլանդակ ուսներէն կը լինէր:

Ասպար բառի դէմ ասում է տես վահան, որոնք տարբեր բաներ են: Վահան—щитъ, իսկ ասպար—զէնք կը նշանակէ, որ պարզ է հետեւել ոճից «և ասպարաւ քով օգնեա մեզ», այսինքն քո զէնքերով օգնիր մեզ:

Ապառաժ Թարգմանում է крѣпкій, непоколебимый, неутолимый. որ նոյնպէս սխալ է, իսկ յետոյ դնում է скала: Ինչպէս պէտք է հայերէն լաւ չիմացող մարդ կարողանայ օգտուել այս քառարանից, եթէ նա օրինակ կամենայ Թարգմանելու «ապառաժ լեռներ» ոճը, եթէ նա գրէ крѣпкія, непоколебимыя կամ неутолимыя горы:

Անթարի Թարգմանում է женское верхнее платье, որ միանգամայն ծիծաղելի է: Անթարին հայերէն խօսք չէ, այլ պէտք է քրդերէն լինի. սա քրդի տղամարդի վերնազգեստ է:

Ամայաքնակ թէև սխալ չէ опустѣлый, запустѣлый Թարգմանել, բայց այժմ ամայաքնակ կը նշանակի նաև пустынный, отшельникъ:

Անխափան չէ նշանակում безпрепятственный, որի համար կայ անարգել բառը, այլ աւելի ճիշտ է ненарушимый:

Անտեղեակ не свѣдущій չէ, այլ неосвѣдомленный:

Ագարակ բառի առաջին նշանակութիւնը земля է դնում,

որ սխալ է, իսկ ամբարիշտ թարգմանում է безбожный, безбожникъ, беззаконный, իսկ երկրորդ տեղում сварливый և այլն: Եթէ մէկը օրինակ «ամբարիշտ երեխայ» ասելու լինի, նա ըստ բառարանի պէտք է ասէ беззаконный мальчикъ.

Ես արդէն նկատել եմ, որ պ. Դաղրաշեանի բերած ոճերը գրականական չեն: Կան օրինակ գրականական բառեր, որ աշխարհաբառում քիչ գործածական են, ուստի և այդ բառերի միտքը պարզելու ամենալաւ միջոցն է գրարարից ոճեր և օրինակներ բերելը: Օրինակ անսալ բառը, որ կը նշանակի ահանջ դնել, բուն գրաբառ է և այս բառի համար հազարաւոր պարբերութիւններ կարելի է գտնել մեր մատենագիրներից պարզելու թէ անսալ կը նշանակի լսել: Այսպէս նոյն եղիշէի մէջ ասուած է. «Թագաւորն ոչ կամէր անսալ միարան ուխտին Հայոց, որ ամենայն ուժովն իւրեանց ընդդէմ կացեալ էին Հարութեան հեթանոսաց»: Այսպիսի հրաշալի ոճի փոխարէն պ. Դաղրաշեանը ասում է. «աս տղան չուզէ անսալ»:

Անթիւ են անհամար բոլորովին չը գործածական կամ շատ սակաւ գործածական կամ արդէն նշանակութիւնը փոխած բառեր, որպէս և շատ անգամ շինովի բառեր և շատ գեեհկական խօսքեր և ոճեր: Օտար բառեր նոյնպէս շատ կան, որ դեռ բոլորովին հեղինակութիւն չեն ստացել, օրինակ՝ արգումէնտ, ակցիա, արտիլերիա, որ Հաշտարիսանի հայերէն է, և ընդհանրակալը, բացակայում են բազմաթիւ մաքուր հայերէն բառեր: Օրինակի համար որ հայ հեղինակը գործ է ածում անաթոն—лишенный престола, որի համար կայ զահագուրկ բառը, աննեղ—некрашенный, անուտելի—нестѣдобный, անորմ—безстѣнный: Պատահում են այնպիսի ժողովրդական բառեր, որոնք նոյնպէս քիչ են գործածւում և հազիւ թէ երբեք գրականական դառնան: Այսպէս օրինակ «աղաք անել» ոճը ինքնուրոյն ժողովրդական ոճ չէ, այլ «առաջ» բառի աղաւաղումն է և շատ քիչ գաւառներում են գործ դնում: Եթէ մի մարդ վստահութիւն ունի բառարանի ճակատին լիակատար տիտղոս դնելու, նա գոնէ պիտի գիտենայ գրականութեան մէջ եղած գլխաւոր ոճերը և բառերի զանազան նշանակութիւնները: Առնել բայը պ. Դաղրաշեանը թարգմանում է брать, взять, купить, բայց բոլորովին անգէտ է, որ գրաբառում առնել բազմաթիւ ներութիւններ ունի և շատ տարբեր նշանակութիւններ է ստանում: Օրինակ, նա չը գիտէ, որ գրաբառում կայ «փախստական առնել» ոճը, որ կը նշանակէ обрывать въ бѣгство, преслѣдовать: «Եւ գաջ թին բեկեալ փա-

խոտական առնչին մինչև յամուր տեղիս — մայրեացն... պատահում է գրաբառում:

Պատահում են թուրքերէն և գոեհիկ բառեր, օրինակ՝ աջղ, ալաչուխ, ասպար, ալան-թալան, աջալ, ալափստրակ և այլն: Լիակատար բառարանի մէջ իհարկէ կարելի է գաւառաբարբառներից առած խօսքեր բերել, բայց այն ժամանակ՝ երբ իրօք բառարանը լիակատար է և չեն պակասում շատ հիմնական և գրականական խօսքեր. մանաւանդ որ վերոյիշեալ գոեհիկ խօսքերի փոխարէն ունինք պարզ գրականական բառեր, օր. աջղ — վրէժ, ասպար — զէնք, ալաչուխ — վրան են:

Բառարանի մէջ չկան շատ գրականական և ժողովրդական բուն հայերէն խօսքեր: Օրինակ, աննահանջ, անշշուռն, աղէ-բէկ, ասղաման, աշխատ, ահեղասասան, արագավազ (իրեւ ածական), անսուգ, անսուտ, աստի, անգոյ, ամբիժք, անխազ, ապէնխազ, անտի, անդէն, անդրէն, ամբարտակ, անաղատ, անտուժելի, արորժ, առաւելարան, անկ, արիւնատենչ, արջառ կամ աչառ, անտուտ. և այլն. բազմաթիւ բառեր թէ գրականական և թէ ժողովրդական, որ բաց են թողած՝ շատ գործածական են և լիակատար բառարան կազմողը պիտի չը բաւականանայ եղած բառարաններից արտագրելով, այլ պիտի ինքնուրոյն ընթերցանութեամբ և աշխատութեամբ լրացնէ հին բառերանները, որոնց սխալները մանաւանդ չը պէտք է կրկնել: Բառերը ժամանակի ընթացքում փոխում են իրենց նշանակութիւնը և այս հանգամանքը աչքաթող չի կարելի Դանել: Վերոյիշեալ բաց թողած բառերից մի քանիսը դասական ոճեր ունեն, որպէս անսուտ ածականը: Որպէս և մեք ունիմք զանսուտ յիշատակարանսն նախնեաց մերոց» գրաբառում կարելի է կարդալ, ուր անսուտ կը նշանակէ достовѣрный. — պատահում է նոյնպէս «առ թշնամին կալ աննահանջ», որպէս և «անկ իցէ նմա հասանել մինչ ի թագաւորական վիճակն» և այլն և այլն:

Մենք արդէն յիշել ենք, որ քննադատութիւն գրելու հնարաւորութիւն չունինք, որ շատ կարևոր կը կլինէր ապագայի համար: Բայց կարծում ենք, որ պ. Դաղբաշեանին մեր ընդհանուր նկատողութիւնները փնասակար չեն լինի. ինչ խօսք որ մենք գնահատում ենք պ. Դաղբաշեանի ահագին աշխատանքը, որ նա գործ է դրել այս բառարանի վրայ, ուր ահագին նիւթ կայ ժողոված, բայց ցանկանում ենք, որ յետագայ հատորները աւելի լաւ կազմած լինին:

ԳԱՐ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ